**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **23 հոկտեմբերի 2025թ.**

2025թ.-ի հոկտեմբերի 13-23-ը ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ արևային պանելների տեղադրման աշխատանքների ձեռքբերման ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Մովսիսյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, |
| Դ. Հովհաննիսյան՝ | «Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամի ռեկտորի աշխատակազմի ղեկավար, |
| Դ. Կարախանյան՝ | «Երևանի Պետական Համալսարան» Հիմնադրամի գլխավոր ինժեներ, |
| Ա. Վիրաբյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության պետ, |
| Ա. Մալազյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Մովսիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Ա. Առաքելյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ-ի հոկտեմբերի 13-ին, ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային գները.

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | ԵՊՀ Ա. Մանուկյան 1 հասցեում գտնվող մարզահամալիրի տանիքին, Աբովյան 52ա մասնաշենքի տանիքին, Ծարավ Աղբյուրի 5 հասցեում գտնվող ԵՊՀ հանրակացարանի տանիքին, ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական, Ծաղկաձորի և Հանքավանի ուսումնաարտադրական բազաների տանիքներին արևային պանելների տեղադրման աշխատանքներ | 99,037,246.10 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲԿԳԿ-ԲՄԱՇՁԲ-25/46 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Արփիսոլար» ՍՊԸ | ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս 12/3 | +37494208991 | tender@arpisolar.com | 01825631 |
| 2 | «Ալեռտո» և «Արեվ Էներջի» ՍՊԸ-ներ | ք. Երևան, Նաիրի Զարյան 74 Բ; ք. Աբովյան, Երևանյան փ.56/2 | +37498282938; +37441 670-670 | info@alerto.am; arevenergy1@gmail.com | 02686862; 03550116 |
| 3 | «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ | ՀՀ, ք. Արտաշատ, Արտաշատ-Դալար խճ. 1/1 | +37441441441 | hovhannes.aristakesyan@bk.ru | 04228733 |
| 4 | ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ | ք. Երևան Կորյունի 8/4 | +37443100007 | sessolitions@yahoo.com | 02657859 |
| 5 | Էկովիլ ՍՊԸ | Հ, ք. Երևան, Մամիկոնյանց փ. 42-44 | +37477-777-886, +37477-25-73-64 | info@ecoville.am, ruzanna.seyranyan@ecoville.am | 00465627 |
| 6 | Ռուբինար ՍՊԸ | ք. Երևան, Սունդուկյան 19/4, 0012 | +374 99 276 000, +374 99 276 003 | info@rubinar.am | 00460786 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

### 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

«Ալեռտո» և «Արեվ Էներջի» ՍՊԸ-ների կողմից.

- Հավելված 1-ով ներկայացվող դիմում հայտարարության փաստաթղթով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղմամբ հայտարարագիրը ներկայացված է 2023 թվականին, սակայն պետք է ներկայացված լինի 2025 թվականի համար,
- Հավելված 1-ով ներկայացվող դիմում հայտարարության փաստաթղթում նշված է՝ «Ալեռտո» և «Արեվ Էներջի» ՍՊԸ-ները հայտնում են, որ հանդես են գալիս թիվ 25/46 համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի հիման վրա, մինչդեռ հավելված N 1.1-ով ներկայացվող հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և

երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին հավաստման փաստաթղթում և հավելված N 2-ով ներկայացվող գնային առաջարկի փաստաթղթում բացակայում է մասնակցի համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի հիման վրա հանդես գալու վերաբերյալ տեղեկատվությունը:

• Հայտով ներկայացված համատաեղ գործունեության պայմանագրում «Արեվ էներջի» ՍՊԸ-ի կողմից ստորագրությունը բնօրինակը չէ:

ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, ներառյալ հավելված N 2-ով ներկայացվող գնային առաջարկում բացակայում է ղեկավարի պաշտոնի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ռուբինար ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, ներառյալ հավելված N 2-ով ներկայացվող գնային առաջարկում բացակայում է Հրավերով պահանջվող փաստաթղթերի հավելվածների անվանումները:

«Արփիսոլար» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող հայտի ապահովումը ներկայացվել է վարկային կազմակերպության կողմից թողարկված երաշխիքի տեսքով, մինչդեռ հրավերով սահմանված է, որ հայտի ապահովումը կարող է ներկայացվել բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի տեսքով:

Էկովիլ ՍՊԸ-ի կողմից N 2-ով ներկայացվող գնային առաջարկի փաստաթղթում բացակայում է մասնակցի անվանումը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահման ված գնման գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | ԵՊՀ Ա. Մանուկյան 1 հասցեում գտնվող մարզահամալիրի տանիքին, Աբովյան 52ա մասնաշենքի տանիքին, Ծարավ Աղբյուրի 5 հասցեում | «Արփիսոլար» ՍՊԸ | 99,037,246.10 | 49,773,083.00 | 9,954,617.00 | 59,727,700.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գտնվող ԵՊՀ հանրակացարանի տանիքին, ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական, Ծաղկաձորի և Հանքավանի ուսումնաարտադրական բազաների տանիքներին արևային պանելների տեղադրման աշխատանքներ | Էկովիլ ՍՊԸ | | 49,791,667.00 | 9,958,333.00 | 59,750,000.00 |
| | | ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ | | 52,853,900.00 | 10,570,780.00 | 63,424,680.00 |
| | | «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ | | 55,708,000.00 | 11,141,600.00 | 66,849,600.00 |
| | | Ռուբինար ՍՊԸ | | 61,111,000.00 | 12,222,000.00 | 73,332,000.00 |
| | | «Ալեռտո» և «Արեվ Էներջի» ՍՊԸ | | 66,000,000.00 | 13,200,000.00 | 79,200,000.00 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

23.10.2025թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. «Արփիսոլար» ՍՊԸ, Էկովիլ ՍՊԸ , «Ալեռտո» և «Արեվ Էներջի» ՍՊԸ-ների, ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ-ի և Ռուբինար ՍՊԸ-ի հայտերը գնահատել անբավարար, հիմք ընդունելով հրավերի 8.2 կետը:

3. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «Արփիսոլար» ՍՊԸ | անբավարար |
| | «Ալեռտո» և «Արեվ Էներջի» ՍՊԸ-ներ | անբավարար |
| | «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ | բավարար |

| | | |
|---|---|---|
| | ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ | անբավարար |
| | Էկովիլ ՍՊԸ | անբավարար |
| | Ռուբինար ՍՊԸ | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

23.10.2025թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1 | «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ | X | 55,708,000.00 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 23.10.2025թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. 2025 թվականի սեպտեմբերի 25-ին և 2025 թվականի հոկտեմբերի 7-ին գնման վերաբերյալ ներկայացվել են հարցումներ, որոնց 2025 թվականի սեպտեմբերի 26-ին և 2025 թվականի հոկտեմբերի 9-ին տրվել են պարզաբանումներ, իսկ հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Մովսիսյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Դ. Հովհաննիսյան ______________

Դ. Կարախանյան ______________

Ա. Վիրաբյան ______________

Ա. Մալակյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ______________